

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15
վիճակագրության պետական խորհրդի նիստի

27.10.2009թ.

ժ.11:00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ.Անանյան, Ա.Աղազարյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Շաբոյան, Ս.Դավթյան, (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Սիրգոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա.Դաշյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ), Գ.Մուրադյան (իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ)՝ Տիտիգյան (ֆինանսների վիճակագրության բաժնի պետ), Գ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Ա.Հարությունյան (առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ), Մ.Պետրոսյան (շինարարության վիճակագրության բաժնի պետ):

Օրակարգի նախագծում` վեց հարց.

1. «Հետազոտության հարցաթերթ կազմակերպության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ ձև թիվ 3-ՖՀ» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթը ու լրացման հրահանգը հաստատելու, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2006թվականի ապրիլի 14-ի թիվ 03-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Ձեկուցող` Հ. Տիտիգյան/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից` 2004-2008 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանագրքով տվյալների բազաները Հարվարդի համալսարանի միջազգային զարգացման կենտրոնին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ձեկուցող` Գ. Մարտիրոսովա /

3. «Ծառայությունների ծավալի մասին» Ձև թիվ 1-ԾԱՌ-ԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու», «Առևտրի շրջանառության մասին» Ձև թիվ 1-ԱՌ-ԵՎՏՈՒՐ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու» և «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև թիվ 1-ՏՏ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու», ինչպես նաև ՀՀ ՎՊԽ 2005թ. նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն, 2005թ. նոյեմբերի 7-ի թիվ 21-Ն և ՀՀ ՎՊԽ 2005թ. մայիսի 25-ի թիվ 03-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Ձեկուցող` Ա. Հարությունյան/

4. «ՀՀ ՎՊԽ 2004թ. դեկտեմբերի 29-ի թիվ 36-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Ձեկուցող` Ա. Հարությունյան/

5. «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-ԿԾ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու», «ՀՀ ՎՊԽ 2007թ. հունիսի 18-ի թիվ 11-Ն որոշումը մասնակի ուժը կորցրած ճանաչելու», «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-ԿԾ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու», «ՀՀ ՎՊԽ 2007թ. դեկտեմբերի 14-ի թիվ 20-Ն որոշումը մասնակի ուժը կորցրած ճանաչելու», «Օբյեկտների գործարկման և շինարարական աշխատանքների կատարման մասին» ձև թիվ 1-ԿԾ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու» և «ՀՀ ՎՊԽ 2007թ. դեկտեմբերի 14-ի թիվ 21-Ն որոշումը մասնակի ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Ձեկուցող` Մ.Պետրոսյան/

6. Այլ հարցեր:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հետազոտության հարցաթերթ կազմակերպության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ ձև թիվ 3-ՖՀ» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթը ու լրացման հրահանգը հաստատելու, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2006թվականի ապրիլի 14-ի թիվ 03-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Հ. Տիտիկյան/

Որոշեցին՝

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2006 թվականի ապրիլի 14-ի «Կազմակերպության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ» Ձև թիվ 3-ՖՀ հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 03-Ն որոշումը:

Հաստատել «Հետազոտության հարցաթերթ կազմակերպության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ ձև թիվ 3-ՖՀ» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթն ու լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 1-ի:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2004-2008 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանագրքով տվյալների բազաները Հարվարդի համալսարանի միջազգային զարգացման կենտրոնին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա /

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հարվարդի համալսարանի միջազգային զարգացման կենտրոնին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2004-2008 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազաները՝ գուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. «Ծառայությունների ծավալի մասին» Ձև թիվ 1-ԾԱՌ-ԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու», «Առևտրի շրջանառության մասին» Ձև թիվ 1-ԱՌ-ԵՎՏՈՒՐ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու» և «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև թիվ 1-ՏՏ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու», ինչպես նաև ՀՀ ՎՊԽ 2005թ. նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն, 2005թ. նոյեմբերի 7-ի թիվ 21-Ն և ՀՀ ՎՊԽ 2005թ. մայիսի 25-ի թիվ 03-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Հարությունյան/

Որոշեցին՝

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 7-ի «Ծառայությունների ծավալի մասին» Ձև թիվ 1-ԾԱՌ-ԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 20-Ն որոշման 1-ին կետը և այդ կետով հաստատված հավելվածը:

Հաստատել «Ծառայությունների ծավալի մասին» Ձև թիվ 1-ԾԱՌ-ԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 1-ի:

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 7-ի «Առևտրի շրջանառության մասին» Ձև թիվ 1-ԱՌԵՎՏՈՒՐ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 21-Ն որոշման 1-ին կետը և այդ կետով հաստատված հավելվածը:

Հաստատել «Առևտրի շրջանառության մասին» Ձև թիվ 1-ԱՌԵՎՏՈՒՐ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 1-ի:

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի մայիսի 25-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների մասին» Ձև թիվ 1-SS (Տեղեկատվական տեխնոլոգիա) (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 03-Ն որոշման 1-ին կետը և այդ կետով հաստատված հավելվածը:

Հաստատել «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև թիվ 1-SS (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 1-ի:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

4. «ՀՀ ՎՊԽ 2004թ. դեկտեմբերի 29-ի թիվ 36-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ա. Հարությունյան/

Որոշեցին՝

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի «Առևտրի կազմակերպությունների ֆինանսական գործունեության մասին» Ձև թիվ 1-Ֆ (հավելված) (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 36-Ն որոշման 1-ին կետը և այդ կետով հաստատված հավելվածը:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

5. «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու», «ՀՀ ՎՊԽ 2007թ. հունիսի 18-ի թիվ 11-Ն որոշումը մասնակի ուժը կորցրած ճանաչելու», «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-ԿՇ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու», «ՀՀ ՎՊԽ 2007թ. դեկտեմբերի 14-ի թիվ 20-Ն որոշումը մասնակի ուժը կորցրած ճանաչելու», «Օբյեկտների գործարկման և շինարարական աշխատանքների կատարման մասին» ձև թիվ 1-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու» և «ՀՀ ՎՊԽ 2007թ. դեկտեմբերի 14-ի թիվ 21-Ն որոշումը մասնակի ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Մ. Պետրոսյան/

Որոշեցին՝

Հաստատել «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» Ձև թիվ 2-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 1-ի:

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2007 թվականի հունիսի 18-ի «Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» Ձև թիվ 2-կշ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման մեթոդական ցուցումները հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 37-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 11-Ն որոշման 1-ին կետը և այդ կետով հաստատված հավելվածը:

Հաստատել «Օբյեկտների գործարկման և շինարարական աշխատանքների կատարման մասին» Ձև թիվ 1-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 1-ի:

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 14-ի «Օբյեկտների գործարկման և շինարարական աշխատանքների կատարման մասին» Ձև թիվ 1-կշ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման մեթոդական ցուցումները հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 27-Ն որոշման 1-ին կետն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 21-Ն որոշման 1-ին կետը և այդ կետով հաստատված հավելվածը:

/Նորմատիվ/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ